ՈՐՈՇՈՒՄ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 09.08.2021թ. թիվ 2113176301 որոշման հիմքում դրված փաստական հանգամանքների դեմ բերված գանգատն առանց բավարարման թողնելու մասին

<<24>> 08 2021թ. 7-13 12760 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Սիրանուշ Մարտիրոսյանի ՄԴ/68021-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

Արարատի մարզի Խաչփար գյուղի 12-րդ փողոցի 26-րդ տան բնակիչ Սիրանուշ Մարտիրոսյանը դիմումով իր անհամաձայնությունն է հայտնել 20.07.2021թ.-ին ժամը 20:18-ին <<NISSAN>> մակնիշի 36UF187 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցով կատարված երթևեկության կանոնի խախտման համար կայացված Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 09.08.2021թ. թիվ 2113176301 որոշմանը՝ նշելով, որ կանգառ է կատարել, քանի որ ավտոմոբիլի վառելիքը վերջանալիս է եղել:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սիրանուշ Մարտիրոսյանը ճանաչվել է որպես իրավախախտում կատարած անձ, ուստի նրա կողմից ներկայացված գանգատը ենթակա է քննության:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 09.08.2021թ. թիվ 2113176301 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 84-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ կանգառն արգելվում է 1.17 գծանշմամբ նշված ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետի տարածքում կամ, այդ գծանշման բացակայության դեպքում, ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կամ տաքսիների կայանման տեղերի ցուցիչներից 15 մ մոտ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 25-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից (բացառությամբ ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների վարորդների)

ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետի տարածքում կանգառ կատարելը կամ կայանելը կամ երթևեկելի մասի եզրին ոչ զուգահեռ կայանելը (բացառությամբ օրենսդրությամբ թույլատրված դեպքերի)՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Նույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, **չի գերազանցել մեկ րոպե ժամանակահատվածը**, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել:

Իրավախախտումներն ամրագրած տեսանյութը փաստում է, որ դիմումատուի կողմից շահագործվող <<NISSAN>> մակնիշի 36UF187 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը 20.07.2021թ. ժամը 20:17:57-րդ վայրկյանից 20:19:06-րդ վայրկյանը՝ **69 վայրկյան** տևողությամբ Երևան քաղաքի Շիրակ – Արտաշիսյան փողոցների խաչմերուկի հատվածում կանգառ է կատարել ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետի տարածքում, հետևաբար առկա չէ իրավական որևէ հիմք դիմումատուի արարքը նվազ նշանակություն ունեցող գնահատելու համար:

Ինչ վերաբերվում է հարկադրված կանգառ կատարելու վերաբերյալ դիմումատուի պնդմանը, ապա դա չի կարող հիմք հանդիսանալ վարչական տույժ նշանակելու մասին 09.08.2021թ. թիվ 2113176301 որոշումը բեկանելու համար:

Այսպիսով, վարորդի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 25-րդ մասի զանցակազմը, հետևաբար վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասով և 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

<u>Ո Ր Ո Շ Ե Ց Ի</u>

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 09.08.2021թ. թիվ 2113176301 որոշման հիմքում դրված փաստական հանգամանքների դեմ բերած գանգատը թողնել առանց բավարարման:
2. Հանձնարարել ՏՄՀԻՎԳՔ բաժնին, Սիրանուշ Մարտիրոսյանի անվամբ կայացնել նոր վարչական ակտ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
4. Սույն որոշման օրինակն ուղարկել Սիրանուշ Մարտիրոսյանին և ՃՈ ՏՄՀԻՎԳՔ բաժին:

Ե.Կարապետյան

Կատարող Ա.Միրզոյան
Հեռ. 060838402